



յին մակարդակներու կը բարձրացնէ՜, Բիւրականի մէջ հիմնարկած տիպար աստղադիտարանի միջոցով, Ձեր մեծ աշխատանքին օժանդակ առնելով հայ ժողովուրդի ամենատաղանդաւոր գաւակները:

Տեսնէ՜ր լուսապսակ Ալիշանը՝ հայ հանճարին այս աշխարհահռչակ յաղթանակները, եւ հրմուէ՜ր հայրենասէր վանականին սիրտը:

Մեզի վիճակուած է բախտը՝ վկաներն ըլլալու այդ իղձերուն, որոնք, երբեմն՝ երազ, այսօր՝ իրականութիւններ են, շնորհիւ Ձեր ազգանուէր գործունէութեան, որ Արագածի լանջերէն կը տարածուի մինչեւ հեռաւոր Քալիֆորնիաները, եւ ինչո՞ւ ոչ... մինչեւ աստղերը:

Ծանօթ է մեզի որ Բիւրականի գիտական շրջանակներուն մէջ, հայերէն լեզուի մաքրութեան անադմուշ աշխատանք մըն ալ կը տարուի, եւ Մեսրոպեան բարբառի անարատութեան բացառիկ հսկողութիւն մը կը տիրէ, որուն՝ Դուք էք, բոլոր տուէք ըսելու, ամենամախանձախնդիր Ոստիկանապետը:

Այս երջանիկ առիթով, կը փափաքեմ, բոլոր Մխիթարեան Հայրերու հետ միասիրտ, ոգեկոչելով այստեղ անմահները մեր վերածնունդին, Մխիթարէն ու Զամչեաններէն մինչեւ Աւգերեաններն ու Բագրատունիները, բարի գալուստի ջերմ ու անկեղծ զգացումներու խառնել գնահատանքը Ձեր մեծ վաստակին, հռչակելով Ձեզ, սիրելի Վիկտոր Համագասպի Համբարձումեան, պատուոյ անդամ՝ Սուրբ Ղազարու վանքի Մխիթարեան Ակադեմիային:

Մեր անկեղծ մաղթանքն է որ երկար ու բեղուն ըլլայ Ձեր կեանքը քանկագին, աստղերու քիւով. եւ Ձեր անունը հրոչակուի նորածին համաստեղութիւններուն կամ աստեղախումբերուն հետ, ի պատիւ հայ ժողովուրդին եւ հայ Մշակոյթին:

Ողջոյն ու բարի գալուստ Ձեզի եւ Ձեր ազնիւ Տիկնոջ:

Ձեր անձնական մէջ մենք կ'ողջունենք Հայրենիքը ամբողջ, սիրոյ եւ եղբայրութեան ջերմ զգացումներով:

\* \* \*

Ս. Ղազարի Հայկական Ճեմարանը՝ Գերպ. Արքայօր կողմէ, հռչակեց զինքը Պատուոյ անդամ նոյն կաճառին: Վիկտոր Համբարձումեանի այն գիտնական մարդու եւ միջադպրոցին որակով երեւելի աստեղագէտին մէջ, դժայելի ազգասիրութեամբ մը, յայտնուած է ակնբախ նախանձախնդրութիւն՝ հայ լեզուին հանդէպ եւ զխառնապէս գիտական հայ եղբարնութեան, հիացում պատճառելով լսողին:

Սուրբ առաւ Վիկտոր Համբարձումեան.

Շատ յարգելի Սրբազան Հայրեր,

Շատ մեծ չափով զգացուած եմ այն բնորի համար՝ որ դուք ասացիք: Շատ գեղեցիկ խօսքեր ասացիք ի հարկէ, իմ անձնական դերը գերազնահատուած էր. չափազանց շատ ասուեց իմ մասին. ես այդքան արժանի չեմ՝ ոչ իմ աշխատանքով, ոչ ալ իմ կեանքով: Սակայն այս բոլորը ես գնահատում եմ որպէս արժէքաւորում այն մեծ աշխատանքին՝ որ կատարուում է Հայաստանում, գիտութեան բնագաւառում, եւ ոչ միայն ընդհանրապէս գիտութեան բնագաւառում, բայց առանձնապէս հայագիտութեան բնագաւառում, որի համար Դուք՝ Հայրեր, տուել էք այս Հաստատութեան մէջ, այնպիսի մի շարք փայլուն անձնաւորութիւններ, որոնք աշխատել են հայագիտութեան բնագաւառում, պայծառացրել են հայագիտութիւնը, պայծառացրել են Հայոց լեզուն, արուեստը, գրականութիւնը, հին գրականութիւնը, եւ շատ բան են արել, ոչ միայն պահպանելու գործում հայկական հին մշակոյթը, այլ եւ զարգացնելու այդ, ուսումնասիրելու մանրամասնօրէն, եւ ցոյց տալու համար հայ մշակոյթի մեծ եւ անսահման գանձերը:

Այս զգացմունքով ես ինքն ուզեցի այցելել Ձեզ, որ տեսնեմ քէ ինչպէս Դուք աշխատում էք շարունակել Ձեր Նախնիքների գործը, այդ մեծ աշխատանքը՝ որ միշտ գնահատուում է հայ մտաւորականութեան կողմից:



Վ. Համբարձումեան զգացուած՝ շնորհակալութեան խօսքեր կը փոխադարձէ:

Յանկանում եմ Ձեզ առողջութիւն եւ երջանկութիւն, որ կարողանաք աւելի եւս աշխատել եւ զարգացնել հայագիտութեան այն բնագաւառները՝ որոնցմով Դուք ըզբաղուում էք:

Շատ զգացուած եմ. շնորհակալութիւն եմ յայտնում իմ կնոջ՝ Տիկին Համբարձումեանի կողմից, եւ իմ կողմից, շնորհակալութիւն Ձեզ այս շատ ջերմ ընդունելութեան համար եւ մաղթում եմ Ձեզ ամենայն բարիք եւ երջանկութիւն:

Երեկոյեան ժամը 6,30ին, Վ. Համբարձումեան՝ չողեմակոյիով մը Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանը հասաւ. աշակերտութիւնը՝ խանդավառ ծափերու մէջ ողջունեց զինքը: Այցելութիւնը շատ համոզող թուեցաւ, բայց անջնջելի յիշամոռ թուեցաւ, բայց անջնջելի յիշամոռ թուեցաւ: Վ. Համբարձումեան տակներ թողուց: Վ. Համբարձումեան յուզուած մեկնեցաւ Փատովա, խոստանալով ուրիշ առիթով աւելի երկար մնալ մեզի հետ:

\* \* \*

Մեր մէջ քիչ եղած են անցեալին՝ գիտութեան նուիրուածներ եւ շատ դրական դիմագրծով յայտնուածներ: Նոր ժամանակներու մէջ ունեցանք գիտութեան նըւիրեալ մտքեր ալ, բայց Վ. Համբարձումեան բացառիկ դէմք մը եղաւ այդ շար-

քին մէջ, անցնելով ազգայինէն միջազգայինի սահմանին: Ան նախ իբր հրաշք-տղայ մը յայտնուած Թիֆլիս եւ Երեւան, Լենինկրատի մէջ Աստղադիտութեան համալսարանի փայլուն ուսանող մը հանդիսացաւ, եւ ապա կազմակերպել է նոյն Համալսարանին գիտական միջավայրին: Ստեղծելով հոն տեսական Աստղաբանագիտութեան (Astrofisica) ամպլոնը, իր անունը ստացաւ նոր փայլ մը: Մինչեւ 1843 թուականը՝ Վիկտոր Համբարձումեան ապրած է Հայաստանէն դուրս, բայց միշտ հոգիով կապուած հայրենի աշխարհին հետ: 1943ին ՀՍՍՀ Գիտութիւններու Ակադեմիային հիմնադրումէն ետքը՝ Նոր Ակադեմիային փոխ-Նախագահն է ինքը: Բնակութիւնն ալ Երեւան է այլեւս: Բիւրականի Աստղադիտարանը 1946ին կը դառնայ կեդրոնը աստղերու քննութեան նուիրուած իր գիտնականի կեանքին: Տարի մը ետքը Գիտ. «Հայկ. Ակադեմիայ»ին Նախագահ կ'անուանուի եւ կը պահէ այդ տիտղոսը մինչեւ այսօր: Անրկա, կ'ըլլայ արդարեւ մեծ աստղը հայ երկնակամարին, աշխարհի աչքը իր վըրան հրաւիրելով: Աղբեր և Ակադեմական կազմակերպութիւններ կը մրցին պատուելու հայ գիտնականը: 1947-1969 աւելի քան քսանամեակ մը շարունակ տեղի ունեցած է այս մրցումը:

1947ին Պատուոյ անդամ է Ամերիկեան աստղադիտական Ընկերութեան:

1948-1955 եղած է փոխ-Նախագահ Միջազգային աստղադիտական Միութեան:

1953ին Պատուոյ անդամ Անգլիոյ Թագաւորական աստղադիտական Ընկերութեան:

— Նոյն տարին՝ Լիէժի (Պելճիքա) Թագաւորական Գիտական Ընկերութեան թղթակից անդամ:

1955ին Սովետական Միութեան Գիտութիւններու Ակադեմիային Նախագահ հռութեան անդամ:

1956ին Աւստրիոյ Գիտութիւններու Ակադեմիային թղթակից անդամ:



